

Տոկունության ակունք-աղբյուրը

Այս տարվա փետրվարի 21-ին «Նեգա-վիսիմայա գազետա» թերթում տպագրվել է Պավել Ֆելզենգաուերի «Ղարաբաղ. հյու-ժիշ պատերազմի հեռանկարները» վերտա-նությամբ ուշագրավ թղթակցությունը: Հենվելով տարածքաշրջանում գտնվող նախկին խորհրդային բանակի հետախու-զության տվյալների վրա, հեղինակը զու-գահեռներ է անցկացնում հակամարտող զինված խմբավորումների միջև, եզրակաց-նում, որ հայկական զինված ուժերը հիմա նշանակալիորեն ուժեղ են ադրբեջանական բանակից և նրան գերազանցում են թե՛ կազմակերպական առումով և թե՛ մար-տունակությամբ: Հեղինակը ռուս ընթեր-ցողին հայտնի է դարձնում մեզ համար էական նշանակություն ունեցող և միայն մեզ հայտնի մի հանգամանք. ադրբեջա-նական ղեկավարությունը հույսը դրել էր նրա վրա, որ խորհրդային զիված ուժերը և ներքին զորքերը կկատարեն ամբողջ «սև աշխատանքը» և «կլուծեն» լեռնային Ղա-րաբաղի հիմնահարցը: Եվ կլուծեին, եթե անցյալ տարվա օգոստոսյան հեղաշրջումը չխանգարեր: Հիմա կովող կողմերը թողնը-ված են իրենց հույսին: Հեղինակը համոզ-ված է, որ նման լայնամասշտաբ պատե-րազմի դեպքում առաջիկա ամիսներին հա-ջողությունը կուղեկցի հայկական բանա-կին: Նրա կարծիքով հայերը կգրավեն Շուշին, թերևս նաև Աղդամը, ռազմավա-րական նպատակ ունենալով... Գյանջան: Որ վերջնական հաղթանակի հասնելու համար տնտեսական առավել մեծ պոտեն-ցիալ ունեցող Ադրբեջանից կպահանջվեն բազմամյա ջանքեր, հազարավոր զոհեր և միլիարդավոր ռուբլիներ: Խոսվում է ար-տաքին ուժերի՝ Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի հնարավոր միջամտության և այլ գործոնների մասին: Մի խոսքով, այժմ գերադասությունը տալով հայկական կող-մին, վեր հանելով նրա առավելություննե-

րը և հակառակորդի վատ կովելու պատ-ճառները, «մոռանում է» ամենագլխավորը. տանկերով, զրահամեքենաներով, ուղղա-թիռներով զինված, «Գրադ» կայանքներ ունեցող ադրբեջանցիների դեմ ավտոմատ-ներով և անգամ որսորդական հրացաննե-րով կովող հայերը պաշտպանում են հայ-րենի հողը, ազգային-ազատագրական պա-տերազմ են մղում ագրեսորի դեմ: Դա է արցախցիների ուժի, հայրենասիրության ու տոկունության ակունք-աղբյուրը: Այսինքն ռազմական տեխնիկայով հագեցվածության առավելությունները ագրեսիա կատարող Ադրբեջանի կողմն են, իսկ հոգևոր-բարո-յական առավելությունները՝ հայրենի հողի վրա ազգային-ազատագրական կռիվ մղող Արցախի կողմը: Եվ «Գրադ» կայանքներն անգամ ի գորտ չեն ընկնել հայրենի հողի վրա կովող և իրենց օջախների պատիվը պաշտպանող դարաբաղցիների հերոսական ոգին: Իսկ երբ (հուտանք) Շուշվա երկնքում վերջապես ճայթի պատասխան հարվածը, համոզված են, հայերի կառուցած այդ քա-ղաքում մի թուրք անգամ չի մնալու: Ար-ցախի, այդ թվում և Շուշիի հողը պիտի ե-րերա, հողը պիտի այրվի երեկվա քոչվոր զավթիչների ոտքերի տակ: Եվ Շուշվա հայկական զերեզմանների մեռելների ոգի-ներն անգամ կհետապնդեն իրենց պղծող-ներին: Եվ Ղազանչեցոց վիրավոր եկեղեցու անեծքը պիտի իջնի նրանց վրա: Եվ Շու-շին նորից պիտի հառնի ու վերստանա իր նախնական հայկական տեսքը և հայերեն ճայի հայոց լեռնաշխարհին: Հենց դրա համար, ամբողջ լեռնաշխարհի հայկական ոգին մշտաբար պահելու համար է պայ-քարի ելել դարաբաղցին: Բայց դեռ որ-քա՞ն գոհողություններ կպահանջվեն մեր այդ արդար իրավունքի իրականացման հա-մար: